«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Տարեկան հաշվետվություն

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ **3**

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ **4**

1. ԱՔՀԿ-ի ներկայացվածությունը մեդիայում և հանրային դիսկուրսում **4**

2. ԱՔՀԿ-ի միջազգային համագործակցությունն ու արտաքին կապերը **6**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ **7**

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ **8**

Կազմակերպության մասին

«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) վերլուծական կենտրոն է, որը զբաղվում է քաղաքական, անվտանգային և հասարակական կյանքի ոլորտներին առնչվող խորքային փորձագիտական հետազոտություններով, վերլուծություններով և խորհրդատվությամբ:

Կազմակերպության նպատակն է լուսաբանել և վերլուծել Հայաստանի, տարածաշրջանի և միջազգային մակարդակով ծավալվող ռազմաքաղաքական գործընթացները՝ գնահատելով սպառնալիքները, նախանշելով հակազդման ռազմավարություններ, առաջարկելով քաղաքական կանխատեսումներ և հանրայնացնելով արդյունքները՝ հիմնված փաստարկված ուսումնասիրությունների վրա:

Կազմակերպությունն իրականացնում է տարաբնույթ ծրագրեր և նախաձեռնություններ, ներառյալ՝ հարցազրույցներ, մամլո ասուլիսներ, դասընթացներ և փորձագիտական քննարկումներ: Բացի այդ, կազմակերպությունը մշակում և հրապարակում է գիտական, վերլուծական և տեղեկատվական նյութեր՝ անվտանգային քաղաքականության, տարածաշրջանային և գլոբալ անվտանգության սպառնալիքների, ինչպես նաև այլ արդի քաղաքական խնդիրների վերաբերյալ:

Իր նպատակների և խնդիրների իրագործման շրջանակում կազմակերպությունը համագործակցում է պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանում գործող հասարակական և մասնագիտական կառույցների հետ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնը (ԱՔՀԿ) իր գործունեությունը սկսել է 2022 թվականին: Հիմնադրումից ի վեր կենտրոնը նպատակադրել է ակտիվ և շարունակական ներկայություն ապահովել մեդիա հարթակներում ու հանրային դիսկուրսում: Գործունեությունն, ընդհանուր առմամբ, դրսևորվել է տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ հարցազրույցների, մամլո ասուլիսների, հեռուստաբանավեճերի և հանրային քննարկումների տեսքով: Բացի այդ, ԱՔՀԿ-ն հրապարակել է վերլուծական հոդվածներ, հետազոտական նյութեր՝ ուղղված հանրային իրազեկման բարձրացմանն ու անվտանգային օրակարգի խթանմանը:

1. ԱՔՀԿ-ի ներկայացվածությունը մեդիայում և հանրային դիսկուրսում

2022թ., իր գործունեության մեկնարկին զուգահեռ, Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնը (ԱՔՀԿ) իր ակտիվ ներգրավվածությունն է ապահովել ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային վերլուծական ու մեդիա դաշտում: Կենտրոնի նախագահ **Արեգ Քոչինյանը** տարվա ընթացքում հանդես է եկել շուրջ 140 հարցազրույցով՝ տարբեր հարթակներում ներկայացնելով անվտանգային օրակարգի վերլուծություններ և ԱՔՀԿ-ի դիրքորոշումները: Նա մասնակցել է ավելի քան քառասուն հեռուստաբանավեճի և թեմատիկ քննարկումների, որտեղ հանդես է եկել փորձագիտական վերլուծություններով: Նույն

ընթացքում Քոչինյանը տեղական և արտասահմանյան հեղինակավոր պարբերականներում հրապարակել է մոտ վաթսուն վերլուծական հոդված, որոնցում անդրադարձել է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ՝ միջազգային անվտանգության հիմնախնդիրներին:

Կենտրոնի փորձագետ **Ռոբերտ Ղևոնդյանը** 2022 թվականի ընթացքում նույնպես իր գործունեությամբ ակտիվ մասնակցություն է ունեցել մեդիա և վերլուծական հարթակներում: Տարվա ընթացքում նա մասնակցել է ավելի քան 40 հարցազրույցի, հանդես եկել տասնյակ մասնագիտական քննարկումներում և բանավեճերում՝ տարբեր լրատվամիջոցներում ներկայացնելով իր դիտարկումներն ու վերլուծությունները: Բացի այդ, նրա հեղինակությամբ հրապարակվել են մի շարք գիտական հոդվածներ՝ նվիրված միջազգային հարաբերություններին և քաղաքական գործընթացների վերլուծությանը:

2. ԱՔՀԿ-ի միջազգային համագործակցությունն ու արտաքին կապերը

2022 թվականին Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնի նախագահ Արեգ Քոչինյանը շարունակաբար ներկայացրել է կենտրոնը միջազգային հարթակներում՝ մասնակցելով տարբեր երկրների ներկայացուցիչների, փորձագետների, դիվանագետների և պաշտոնատար անձանց հետ բարձր մակարդակի հանդիպումներին ու քննարկումներին:

Այս ձևաչափով համագործակցությունը կարևոր հարթակ է ծառայել Հայաստանի անվտանգային քաղաքականությանն առնչվող հիմնախնդիրների բարձրաձայնման, դիրքորոշումների ներկայացման, ինչպես նաև քաղաքական ու փորձագիտական շրջանակների հետ երկխոսության խորացման համար:

Միջազգային գործընկերների հետ հաստատված կապերն ու նախաձեռնված երկխոսությունները կարևոր նախադրյալ են կենտրոնի արտաքին ներգրավվածության ընդլայնման և համագործակցության երկարաժամկետ ամրապնդման համար:

Ֆինանսական հաշվետվություն

Ֆինանսական շարժ 2022 թվական		
Մուտքեր	Մուտք AMD	Մուտք USD
Արեգ Քոչինյան (փոխառություն)	7000	
Ծախսեր		
Բանկային ծախս	5500	

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

www.rcsp.am

info@rcsp.am

+374 55 342 639

https://www.facebook.com/RCSPNGO